ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2024 թվականի թիվ 333-Ա

ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության պահանջը.

որոշում եմ

1. Հաշվի առնելով մայիսյան հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքների վերացման և Աղստև գետի խնդրահարույց հատվածների մաքրման աշխատանքների հրատապությունը՝ թույլատրել ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմին գետի հոսանքների կարգավորման և ջրհեղեղների վերահսկման աշխատանքների ձեռքբերումն իրականացնել հրատապ մեկ անձի ընթացակարգով:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումներն իրականացնել «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ հրատապ մեկ անձից գնում կատարելու ձևով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-12-06 09:00:45 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2024 թ. դեկտեմբեր 04
ք. Իջևան